

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2019

ՀՏԳ. 373:941:(479.25)
ԳՄԴ. 74.2+63.3(2h)
Հ 282

**Պատասխանատուներ` ՆԱՐԻՆԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԵՎ ՎԱՐԴԱՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ**

Գնահատման և թեստավորման կենտրոնը շնորհակալություն է հայտնում ՀՀ բուհերի հայոց պատմության ամբիոններին, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտին, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին, ուսուցիչներին և բոլոր շահագրգիռ անձանց` ուղեցույցի նախագծի վերաբերյալ հայտնած կարծիքների, ներկայացրած առաջարկությունների և դիտողությունների համար, որոնք հաշվի են առնվել ուղեցույցի սույն տարբերակում:

Հ 282 Հայոց Պատմություն: Պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց: Գնահատման և թեստավորման կենտրոն, 2019. 43 էջ:

ԳՄԴ.74.2+63.3(2h)

ISBN 978-9939-805-67-2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....	4
Թեստի կառուցվածքը	5
Առաջադրանքների կառուցվածքային տեսակները	7
Թեստային առաջադրանքներում ընդգրկվող նյութը.....	25
Պատասխանների ձևաթուղթը	42
Հանձնարարվող գրականություն	43

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված է 2019-2020 ուսումնական տարվա պետական ավարտական և միասնական քննությունների թեստի կառուցվածքը, տրված են առաջադրանքների թեմատիկ, բովանդակային և կառուցվածքային տեսակների համամասնությունը, առաջադրանքների կառուցվածքային տիպերը, դրանց լուծման եղանակների և պատասխանների ձևաթղթում լրացման կարգի բացատրությունները, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները, պատասխանների ձևաթուղթը և պատասխանի գնահատման չափանիշները:

Հայոց պատմության շտեմարանները, պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը կազմվելու են համաձայն ուղեցույցի:

Քննական թեստերը կազմվում են «Շտեմարաններում» առկա առաջադրանքներից և «Շտեմարանների» առաջադրանքների հիմքի վրա կազմված նոր առաջադրանքներից:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ

Քննական թեստը բաղկացած է Ա և Բ մակարդակներից և ներառում է 70 առաջադրանք:

Ա մակարդակի առաջադրանքները վերաբերում են ավարտական քննությանը և միասնական քննության ավարտական մասին:

Միասնական քննությունը ներառում է Ա և Բ մակարդակները:

Թեստային առաջադրանքները ունեն հետևյալ 3 կառուցվածքային տեսակները՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և պնդումների փունջ՝ բաղկացած 6 պնդումներից:

Ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր, պնդումների փնջի ճիշտ պատասխանին՝ առավելագույնը 6 միավոր:

Թեստի ընդհանուր միավորը 80 է:

Ստորև ներկայացված է առաջադրանքների բովանդակային և կառուցվածքային տիպերի համամասնությունը:

Առաջադրանքների քվանտակային տիպերը		Կառուցվածքային տիպերը					
		Ա մակարդակ			Բ մակարդակ		
		Ընտրովի պատաս- խանով	Կարճ պատաս- խանով	պնդում- ների փունջ	Ընտրովի պատաս- խանով	Կարճ պատաս- խանով	պնդում- ների փունջ
1	Տարեթվերի իմացություն	10(1-8, 28-29)	---		---	---	
2	Փաստերի և երևույթների իմացություն	10(9-16, 30-31)	---		---	---	
3	Աշխատանք ակզբնաղբյուրների հետ	4(17-18, 32-33)	---		---	---	
4	Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն	3(19-20, 34)	1(39)		2 (46-47)	1 (60)	
5	Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն	3 (21-22, 35)	1(40)		3 (48-49, 56)	2 (61-62)	
6	Պատմական իրադարձությունների և երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացություն	4 (23-24, 36-37)	2 (42- 43)		3(50-52)	3 (65-67)	
7	Պատմական իրադար- ձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում	3(25-26, 38)	1 (44)		2 (53, 57)	2 (68-69)	
8	Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում	1 (27)	1 (41)	1 (45)	4 (54- 55,58-59)	2 (63-64)	1 (70)

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Քննական թեստի առաջադրանքների պահանջները ձևակերպվում են հարցերի կամ հանձնարարությունների ձևով:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում ձևակերպվում է պահանջը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Կարճ պատասխանով առաջադրանքները երկու տիպի են և ունեն կատարման տարբեր եղանակներ:

Առաջին տիպի կարճ պատասխաններով առաջադրանքներում պահանջից հետո կարող են տրված լինել պատասխանի համարակալված՝ հինգից մինչև ինը տարբերակ (պնդումներ, բացատրություններ, տերմիններ, իրադարձություններ և այլն), որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան(ներ)ը: Ամակարդակում տրված են հինգ կամ վեց համարակալված տարբերակներ, որոնցից ճիշտ են մեկը կամ երկուսը: Այն առաջադրանքում, որտեղ ճիշտ պատասխանն է համարակալված տարբերակներից միայն մեկը, պետք է նշել միայն դա: Այն դեպքում, երբ ճիշտ պատասխանն է համարակալված տարբերակներից երկուսը, պետք է երկուսն էլ գրանցել: Ոչ ամբողջական կամ սխալ պատասխանների, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում քննություն հանձնողը միավոր չի վաստակում:

Բ մակարդակում առաջին տիպի կարճ պատասխանով առաջադրանքներում ճիշտ են պատասխանի համարակալված յոթից մինչև ինը տարբերակներից երկուսը կամ երեքը: Այդ դեպքում, կախված առաջադրանքից, անհրաժեշտ է գտնել և գրանցել պատասխանի երկու կամ երեք ճիշտ պատասխանները: Ոչ ամբողջական կամ սխալ պատասխանների, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում քննություն հանձնողը միավոր չի վաստակում:

Ա մակարդակում երկրորդ տիպի կարճ պատասխաններով առաջադրանքներում 5 դատարկ վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված փաստերի, անունների, իրադարձությունների կամ տարեթվերի համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն կամ համապատասխանություն: Դժիշտ ամբողջական պատասխանի համար տրվում է 1 միավոր, իսկ մեկ և ավելի սխալ պարունակող պատասխանի, կամ ամբողջական պատասխանի բացակայության դեպքերում միավոր

չի տրվում:

Բ մակարդակում երկրորդ տիպի կարճ պատասխաններով առաջադրանքներում 6 դատարկ վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված փաստերի, անունների, իրադարձությունների կամ տարեթվերի համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն կամ համապատասխանություն: Ծիշտ ամբողջական պատասխանի համար տրվում է 1 միավոր, իսկ մեկ և ավելի սխալ պարունակող պատասխանի, կամ ամբողջական պատասխանի բացակայության դեպքերում միավոր չի տրվում:

Պնդումների փունջ առաջադրանքները թեստերում երկուսն են (մեկական Ա և Բ մակարդակներում): Դրանք ներկայացված են հետևյալ կերպ. տրված են 6 պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին պետք է տրվի առաջարկվող երեք պատասխաններից՝ «Ծիշտ է», «Մխալ է» կամ «Չգիտեմ», մեկը: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

Քննական թեստի առաջադրանքները կատարելուց հետո քննություն հանձնողը ճիշտ պատասխանները պետք է գրանցի պատասխանների ձևաթղթում:

Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:

Գնահատումը կատարվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «Ծիշտ է» կամ «Մխալ է» պատասխանի համար քննություն հանձնողը վաստակում է մեկական միավոր: «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում: Յուրաքանչյուր սխալ նշված «Ծիշտ է» կամ «Մխալ է» պատասխանի համար քննություն հանձնողը կորցնում է (առաջադրանքին տրվելիք միավորներից հանվում է) մեկական միավոր: Եթե վաստակած և կորցրած միավորների քանակը հավասար է, կամ կորցրած միավորների թիվը գերազանցում է վաստակած միավորների թիվը, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է 0: Այլ առաջադրանքներից վաստակած միավորներից որևէ միավոր չի հանվում:

Բացի պնդումների փնջից՝ բոլոր առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը կամ պատասխանի բացակայությունը՝ 0: Ստորև ներկայացված են թեստային առաջադրանքների նմուշներ, դրանց կատարման վերաբերյալ բացատրություններով:

Ա մակարդակ

1. Տարեթվերի իմացություն

Այս առաջադրանքները միայն ընտրովի պատասխանով են: Ձևակերպվում է պահանջը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

Ե՞րբ է Երևանի Հայոց ազգային խորհրդի կողմից Արամ Մանուկյանը հաստատվել Երևանի նահանգի դիկտատոր:

- 1) 1917 թ. դեկտեմբերին
- 2) 1918 թ. մայիսի 28-ին
- 3) 1918 թ. մարտի 24-ին
- 4) 1915 թ. մայիսի 7-ին

Այս և ընտրովի պատասխանով մյուս առաջադրանքներին պատասխանելիս՝ քննություն հանձնողը համապատասխան համարի առաջադրանքի սյունակի չորս վանդակներից մեկում պետք է դնի «X» նշանը: Օրինակ, եթե քննություն հանձնողը 8-րդ առաջադրանքի համար ընտրել է 3-րդ պատասխանը, ապա դա պետք է գրանցի հետևյալ ձևով՝

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	1
2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	2
3	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	X	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	3
4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	4

Եթե քննություն հանձնողը ընտրովի պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում **«Միայն նշված պատասխանները փոխելու տեղը»** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում՝ հետևյալ ձևով.

	3	3
1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
3	X	<input type="checkbox"/>
4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

2. Փաստերի և երևույթների իմացություն

Այս առաջադրանքները նույնպես միայն ընտրովի պատասխանով են: Ձևակերպվում է պահանջը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

Ո՞վ էր ստանձնել Չեյքունի 1862թ. ապստամբության ընդհանուր ղեկավարությունը:

- 1) Սկրտիչ Յադուբյանը
- 2) Նազարեթ Չավուշը
- 3) Գարուն Աղասին
- 4) Պապիկ Ենի-Տունյանը

3. Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

Այս առաջադրանքները ևս միայն ընտրովի պատասխանով են: Ներկայացվում է պահանջը, սկզբնաղբյուրային մեջբերումը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:

«Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար... Մենակ ենք և պետք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար»: Ո՞վ է ներկայացված խոսքերի հեղինակը:

- 1) Միմոն Վրացյանը
- 2) Արամ Մանուկյանը
- 3) Գարեգին Նժդեհը
- 4) Անդրանիկ Օզանյանը

4. Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն

Այս առաջադրանքները ըստ կառուցվածքի երկու տիպի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է չորս տերմին և հասկացություն, կամ տերմինի և հասկացության չորս բացատրություն: Դրանցից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

Ինչպե՞ս էին անվանում արքունիքի և թագավորական պահակագործի հրամանատարին Արշակունիների օրոք:

- 1) Մարդպետ
- 2) Սպարապետ
- 3) Մաղխազ
- 4) Ոստանիկ

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են տերմինների կամ հասկացությունների բացատրության 5-6 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխանի երկու տարբերակների համարները:

Օրինակ՝

Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.

1) Միջնադարյան Հայաստանի քաղաքներում առևտրին, արհեստներին, հարկահանությանն ու շուկաներին հետևող հատուկ պաշտոնյան կոչվում էր շահապ:

2) Հայդուկ արաբերեն նշանակում է տասնապետ:

3) Օսմանյան կայսրությունում ազդեցություն ձեռք բերելու և նրանից զանազան զիջումներ կորզելու նպատակով եվրոպական մեծ տերությունների միջև պայքարի արդյունքում առաջացած միջազգային հարաբերությունների հիմնախնդիրը ստացել է «Արևելյան հարց» անվանումը:

4) Կիլիկիայում XIII դարի սկզբներին ստեղծված պաշտպանական ամրությունները կոչվել են ալմախներ:

5) Հայ ազգաբնակչության շահերը պաշտպանելու և ազգային հիմնախնդիրներին հետամուտ լինելու նպատակով ԱՄՆ-ում Հայ հեղափոխական դաշնակցության կողմից ստեղծված կազմակերպությունը կոչվում է «Հայկական ազգային կոմիտե» կամ Հայ Դատի հանձնախումբ:

Այս և կարճ պատասխանով մյուս առաջադրանքներին պատասխանելիս քննություն հանձնողը պատասխան(ներ)ը պետք է գրանցի նախատեսված հորիզոնական վանդակներում՝ ցանկացած հաջորդականությամբ: Հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թվանշան: Օրինակ, եթե 39-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանն է 3 և 5, ապա այն պետք է գրանցել այս ձևով՝

39	3	5
40		
41		
42		

Նույն առաջադրանքի պատասխանը կարելի է գրանցել նաև այս ձևով՝

39	5	3
40		
41		
42		

Եթե քննություն հանձնողը կարճ պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում **«Միայն նշված պատասխանները փոխելու տեղը»** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում՝ հետևյալ ձևով.

Կարճ պատասխան	3	9		4	5

5. Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է չորսից մինչև վեց պնդում կամ փաստարկ: Պատասխանի չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

Ինչո՞վ էր պայմանավորված Վանի թագավորության և Ատրեստանի հարաբերությունների մերձեցումը Արգիշտի II-ի օրոք:

- 1) Երկու պետություններում էլ արդեն իշխում էին նույն արքայատոհմի ներկայացուցիչներ:
- 2) Նրանք արդեն սահմանակից պետություններ չէին:
- 3) Արգիշտի II-ն ընդունել էր Ատրեստանի գերիշխանությունը:
- 4) Նրանց համար հանդես էին եկել նոր վտանգավոր հակառակորդներ:

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 5-6 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող երկու տարբերակների համարը:

Օրինակ՝

Խորհրդային կառավարությունը 1953թ. մայիսին պաշտոնապես հայտարարեց, որ Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի, որովհետև՝

- 1) Թուրքիան դարձել էր ԽՍՀՄ-ի դաշնակիցը:
- 2) Սկսվել էր սառը պատերազմը:
- 3) Ստալինը խուսափեց Թուրքիայի հետ ռազմական բախումից:
- 4) Ստեղծվել էր Հյուսիսատլանտյան դաշինքը և Թուրքիան անդամակցել էր դրան:
- 5) Վարչակլան դաշինքի երկրները չաջակցեցին խորհրդային պետությանը այդ հարցում:

6. Պատմական իրադարձությունների և երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո տրվում է 4-6 անունների կամ իրադարձությունների շարք, ինչպես նաև պատասխանի չորս տարբերակ: Պատասխանի չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ`

Բագրատունի արքաներին դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության:

ա) Աշոտ Ողորմած բ) Գագիկ I գ) Աշոտ Երկաթ դ) Սմբատ II

- 1) գ, դ, ա, բ
- 2) գ, ա, դ, բ
- 3) ա, գ, դ, բ
- 4) ա, բ, գ, դ

Օրինակ`

Ըստ ժամանակագրական հաջորդականության` թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վերջինը:

- ա. Հայաստանի Ժողովուրդի նախկին նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանի մահը:
- բ. ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Լ. Բերիայի ձերբակալությունը
- գ. Ահավոր սովը Խորհրդային Միությունում:
- դ. Խորհրդա-գերմանական չհարձակման մասին պայմանագրի կնքումը:
- ե. Խորհրդային Միության ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմի սկիզբը:
- զ. Երկրորդ աշխարհամարտի սկիզբը:

- 1) ե 2) դ 3) գ 4) բ

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 5-6 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխանի համարը:

Օրինակ՝

Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Արձնի գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը:
- 2) Աշոտ Մսակերի նստավայրի տեղափոխումը Դարույնքից Բագարան:
- 3) Նկան ամրոցի հերոսական դիմադրությունն Աշոտ Արծրունու գլխավորությամբ:
- 4) Հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու կառավարման սկիզբը:
- 5) Հովնան Խորթեցու և Աշոտ ու Դավիթ Բագրատունի եղբայրների գլխավորությամբ արաբների ոչնչացումը Տարոնում:

Այս տիպի առաջադրանքներից մեկը պետք է ներկայացվի հետևյալ կերպ. առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո տրվում է 5 անունների կամ իրադարձությունների շարք: Պատասխանի լրացման համար տրվում է համապատասխան քանակությամբ դատարկ վանդակներ: Վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված անունների կամ իրադարձությունների համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն:

Թեստ-գրքույկում այս տիպի առաջադրանքը ներկայացված է այսպես.

Օրինակ՝

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Խառանի ճակատամարտը
- 2) Կրասուսի ժամանումը Արևելք
- 3) Ակցիումի ճակատամարտը
- 4) Արտավազդ II- ի գերեվարումը
- 5) Առաջին եռապետության ստեղծումը

5
2
1
4
3

Չևաթոթում պատասխանը պետք է լրացվի պատասխանի թվերի նույն հերթականությամբ՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:

43	5	2	1	4	3
	Ա	Բ	Գ	Դ	Ե
44					

Եթե քննություն հանձնողը կարճ պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում *«Միայն նշված պատասխանները փոխելու տեղը»* հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում հետևյալ ձևով.

4	3	3	5	1	2	4	

7. Պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում

Այս տիպի առաջադրանքները ընտրովի և կարճ պատասխանով են: Ընտրովի պատասխանով առաջադրանքում պահանջից հետո ներկայացվում են պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային օջախների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարքեր (առաջին շարքում ընդգրկվում են չորսից հինգ, իսկ երկրորդում՝ մեկով ավելի բաղադրիչներ), և տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի չորս տարբերակ: Պետք է ընտրել պատասխանի չորս տարբերակներից միայն մեկը:

Օրինակ՝

Կրթական հաստատությունները համապատասխանեցնել դրանց հիմնադրման վայրերի հետ:

- | | |
|-----------------------|--------------|
| 1) Աղաբաբյան դպրոց | ա) Մոսկվա |
| 2) Մեսրոպյան դպրոց | բ) Աստրախան |
| 3) Մարդասիրաց ճեմարան | գ) Չմյուռնիս |
| 4) Սկյուտարի դպրոց | դ) Կ.Պոլիս |
| | ե) Կալկաթա |
-
- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) 1-բ, 2-ե, 3-ա, 4-դ | 3) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ |
| 2) 1-ա, 2-դ, 3-գ, 4-ե | 4) 1-ա, 2-գ, 3-ե, 4-բ |

Այս տիպի առաջադրանքներից մեկը կարող է ներկայացվել աղյուսակի ձևով: Այդ դեպքում ներկայացվում են պահանջը և երեք այլոնակից բաղկացած աղյուսակ, տրվում է դրանց համապատասխանեցմամբ կազմված պատասխանի չորս տարբերակ: Ըստ աղյուսակի առաջին այլոնակի հերթականության՝ պետք է կատարել համապատասխանեցում և ընտրել ճիշտ պատասխանը (տարբերակը):

Օրինակ՝

Կատարել համապատասխանեցում.

	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Վանի ինքնապաշտպանության սկիզբը	1	1895թ. հոկտեմբեր	1	Նիկոլ Գուման
2	Խանասորի արշավանքը	2	1894թ.օգոստոսի վերջ	2	Սյրտիչ Ավետիսյան
3	Զեյթունի ապստամբության սկիզբը	3	1896թ. հունիսի 3	3	Մեծն Մուրադ
4	Սասունի հերոսամարտի ավարտը	4	1897թ. հուլիսի 25	4	Աղասի
		5	1890թ. հուլիս	5	Անդրանիկ

1)

1	3	2
2	4	1
3	1	4
4	2	3

2)

1	3	2
2	5	5
3	1	4
4	4	3

3)

1	3	1
2	1	2
3	4	3
4	2	4

4)

1	2	2
2	4	1
3	3	4
4	1	5

Կարճ պատասխանով առաջադրանքը պետք է ներկայացվի հետևյալ կերպ. ձևակերպումից հետո տրված են պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային օջախների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարք (առաջին շարքում ընդգրկվում են հինգ (համարակալված է տառերով), իսկ երկրորդում վեց (համարակալված է թվերով)՝ բաղադրիչ, և տրված են տառերով համարակալված և գուգահեռաբար դասարկ վանդակներ: Դաստարկ վանդակներում պետք է լրացնել առաջին շարքի տառի բաղադրիչին համապատասխանող երկրորդ շարքի բաղադրիչի թիվը:

Թեստային գրքույկում այս տիպի առաջադրանքը ներկայացված է այսպես.

Օրինակ՝

Հայ հոգևոր գործիչների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձությունների հետ.

- ա) Հովհաննես Բ Գաբեղենացի
- բ) Ներսես Գ Տայեցի
- գ) Հովսեփ Ա Վայոցձորցի
- դ) Ներսես Ա Պարթև
- ե) Հովհաննես Ա Մանդակունի

ա	1
բ	6
գ	2
դ	3
ե	4

- 1) 571–572 թթ. ապստամբությունը
- 2) Վարդանանց պատերազմը
- 3) Աշտիշատի ժողովը
- 4) Վահանանց պատերազմը
- 5) Դ-վինի 506 թ. եկեղեցական ժողովի գումարումը
- 6) Զվարթնոցի տաճարի կառուցումը

Ձևաթղթում պետք է լրացվեն միայն աջ կողմի սյունակի թվերը նույն հերթականությամբ՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:

43

 Ա Բ Գ Դ Ե

44 1 6 2 3 4

Եթե քննություն հանձնողը կարճ պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ և ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում **«Միայն նշված պատասխանները փոխելու տեղը»** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում հետևյալ ձևով.

4	4	1	6	2 3 5

8. Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում պահանջից հետո ներկայացվում են 4 – 6 պատմական փաստարկներ կամ պնդումներ: Պատասխանի 4 տարբերակներից միայն մեկն է ճիշտը:

Օրինակ՝

Գտնել երկու ճիշտ պնդումները.

- ա. Վռամշապուհ արքան առանց Սասանյանների հետ համաձայնեցնելու հայոց կաթողիկոս է նշանակում Սահակ Պարթևին՝ փորձելով միավորել Մեծ Հայքի երկու մասերը:
- բ. Վռամշապուհ արքայի և Սահակ Պարթև կաթողիկոսի հովանավորությամբ Մեսրոպ Մաշտոցն իրագործում է մշակութային դարակազմի իրադարձություն՝ ստեղծում է Հայոց այբուբենը:
- գ. Վռամշապուհ արքայի հետ խորհրդակցելով՝ Սահակ Պարթևը մեկնում է պարսից արքունիք ու ստանում Վռամ IV-ի համաձայնությունը իր փեսա Համազասպ Մամիկոնյանին Հայոց սպարապետ նշանակելու մասին:
- դ. Հայ նախարարների խնդրանքով պարսից թագավոր Հագկերտ I-ը Վռամշապուհի մահից հետո Հայոց թագավոր է հաստատում Վռամշապուհի որդի Շապուհին:
- ե. Վռամշապուհ արքային չի հաջողվում օգտվել ստեղծված բարենպաստ իրավիճակից և միավորել Մեծ Հայքի երկու մասերը:

1) ա, բ

2) բ, գ

3) գ, դ

4) դ, ե

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 5-6 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող երկու տարբերակների համարները:

Օրինակ`

Ընտրել երկու ճիշտ պնդումները:

- 1) Սան Ստեֆանոյի հաշտությանը Ռուսաստանին էին անցնում Կարսի, Կարիինի, Վանի, Արդահանի, Ալաշկերտի և Բայազետի գավառները, Սև ծովի առափնյա շրջանները` Բաթում նավահանգստով:
- 2) Վան քաղաքի մտավորականության գաղափարական ներշնչողներն են եղել Սյրտիչ Խրիմյանը, Սյրտիչ Փորթուգալյանը և Սյրտիչ Ավետիսյանը:
- 3) «Հայասեր-ազգասեր» իմբակը գաղտնի կերպով տպագրել է «Ազատության ավետաբեր» թերթը:
- 4) Բեռլինի պայմանագրով Բաթումն ու Բայազետի գավառը վերադարձվեցին Օսմանյան կայսրությանը:
- 5) Հնչակյանների ազգային թևը Ա. Նազարբեկյանի գլխավորությամբ հեռացել է կուսակցությունից և հանդես է եկել Վերակազմյալ հնչակյաններ անունով:
- 6) Մայքս-Պիկոյի համաձայնագրով Օսմանյան կայսրության տարածքները բաժանվելու էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև:

Պնդումների փունջը ներկայացվում է հետևյալ կերպ. տրված են 6 պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին պետք է տալ առաջարկվող երեք պատասխաններից` «Ճիշտ է», «Միսալ է» կամ «Չգիտեմ» մեկը: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

Չևաթողում լրացման կարգը. տվյալ պնդման համարի տակ տրված երեք վանդակներից որևէ մեկում պետք է դնել X-նշանը:

45	1	2	3	4	5	6
Ճիշտ է	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Միսալ է	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Չգիտեմ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Եթե քննություն հանձնողը պնդումների փնջում պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում «Միայն նշված պատասխանները փոխելու տեղը» հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում՝ հետևյալ ձևով.

Պնդումների փոնջ	7 0 1
ճիշտ է	<input type="checkbox"/>
Սխալ է	<input checked="" type="checkbox"/>
չգիտեմ	<input type="checkbox"/>

Նմուշ: 45. Բերված փաստարկներից որո՞նք են սխալ.

45-1. 1829 թ. հունիսի 24–ին Ի. Պասկևիչի զլխավորած ռուսական հիմնական ուժերը զրավում են Վերին Բասենի վարչական կենտրոն Հասան Կալան:

- ա) ճիշտ է բ) սխալ է գ) չգիտեմ

45-2. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը ստեղծվել է 1882թ. Խաչատուր Կերեքցյանի ջանքերով:

- ա) ճիշտ է բ) սխալ է գ) չգիտեմ

45-3. Ժողովրդավարական հեղափոխությունը Ռուսաստանում սկսվեց 1905 թ. հունվարի 9–ին Պետերբուրգում բանվորների խաղաղ ցույցի գնդակոծությամբ:

- ա) ճիշտ է բ) սխալ է գ) չգիտեմ

45-4. 1917 թ. դեկտեմբերի 5–ին ընդունվեց Թուրքահայաստանի մասին հրովարտակը:

- ա) ճիշտ է բ) սխալ է գ) չգիտեմ

45-5. 1917 թ. Վանի մարզի տեղական զինված խմբերը դեկավարում էին Լևոն Շադոյանը և Բուլղարացի Գրիգորը

- ա) ճիշտ է բ) սխալ է գ) չգիտեմ

45-6. Հրայրը ծնվել է 1864 թ. Սասունի Ահարոնք գյուղում, սովորել Մշո Ս. Կարապետ վանքի դպրոցում:

- ա) ճիշտ է բ) սխալ է գ) չգիտեմ

Բ մակարդակ

4. Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն

Այս առաջադրանքները ըստ կառուցվածքի երկու տիպի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքները կարող են ներկայացվել երկու ձևով:

Առաջին՝ պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում են 5-9 համարակալումով տերմինների կամ հասկացությունների բացատրություններ: Պատասխանի չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Այս տիպի առաջադրանքների մյուս խումբը կարող է ներկայացվել մաս համապատասխանության ձևով: Տրվում են 4-9 տերմիններ կամ հասկացություններ և դրանց բացատրության վերաբերյալ մեկով ավելի տարբերակներ: Պատասխանի տրված չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 7-9 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող երեք տարբերակների համարները:

5. Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է 7-10 պնդում կամ փաստարկ: Տրվում են պատասխանի 4 տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 7-9 տարբերակներ: Պետք է ընտրել երեք ճիշտ պատասխանի համարները:

6. Պատմական իրադարձությունների և երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է 7-10 անունների կամ իրադարձությունների շարք, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո տրվում է անունների կամ իրադարձությունների 7-9 շարք: Պետք է ընտրել այն երկու տարբերակների համարները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականության ճիշտ դասավորությունը:

Այս տիպի առաջադրանքներից երկուսը թեստում պետք է ներկայացվեն հետևյալ կերպ. առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո տրվում է 6 անունների կամ իրադարձությունների շարք, այնուհետև տրվում է համապատասխան քանակությամբ դատարկ վանդակներ: Վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված անունների կամ իրադարձությունների համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն:

Ձևաթղթում պատասխանը պետք է լրացվի պատասխանի թվերի նույն հերթականությամբ՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:

7. Պատմական իրադարձությունների, երևույթների, վիաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում

Այս տիպի ընտրովի պատասխանով առաջադրանքների ձևակերպումից հետո ներկայացվում են պատմական իրադարձությունների, երևույթների, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարքեր (առաջին շարքում կարող են ընդգրկվել վեցից մինչև տասը, իսկ երկրորդում՝ մեկով ավելի բաղադրիչներ), և տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի չորս տարբերակ: Պատասխանի չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Այս տիպի առաջադրանքներից մեկը կարող է ներկայացվել աղյուսակի ձևով: Այդ դեպքում ներկայացվում են պահանջը և 4

սյունակից բաղկացած աղյուսակ, և տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի 4 տարբերակ: Ըստ աղյուսակի առաջին սյունակի հերթականության՝ պետք է կատարել համապատասխանեցում և ընտրել ճիշտ պատասխանը (տարբերակը):

Կարճ պատասխանով առաջադրանքները պետք է ներկայացվեն հետևյալ կերպ. ձևակերպումից հետո ներկայացվում են պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային օջախների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարքեր (առաջին շարքում ընդգրկվում են վեց (համարակալված է տառերով), իսկ երկրորդում՝ մեկով ավելի (համարակալված է թվերով) բաղադրիչներ), և տրվում է տառերով համարակալված և զուգահեռաբար դատարկ վանդակներ: Դատարկ վանդակներում պետք է լրացնել առաջին շարքի տառի բաղադրիչին համապատասխանող երկրորդ շարքի բաղադրիչի թիվը: Ձևաթղթում պետք է լրացվեն միայն աջ կողմի սյունակի թվերը նույն հերթականությամբ՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:

8. Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է 7-10 պատմական փաստարկների կամ պնդումների շարք, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի 7-9 համարակալված տարբերակներ, որոնցից պետք է ընտրել երեք ճիշտ պատասխանի համարները:

Պնդումների փունջը ներկայացվում է հետևյալ կերպ. տրվում են 6 պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին պետք է տալ առաջարկվող երեք տեսակի պատասխաններից՝ «Ճիշտ է», «Միսալ է» կամ «Չգիտեմ», մեկը: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

Ձևաթղթում լրացման կարգը. տվյալ պնդման համարի տակ տրված վանդակներից որևէ մեկում պետք է դնել «X» նշանը:

**ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ
ՆՅՈՒԹԸ (բովանդակային դասիչ)**

